Սահակ Դադաշեանց, Գրիգոր Այվազեանց, Եղիա Եղիազարեանց, Վարդան Վարժանեանց, Առաքել Ծատրեանց և Պօղոս Սարգսեանց իւրաքանչիւրը 50 ական րուբ. Յակոբ Ապրէսեանց, Գաբրիէլ Ալիբէգեանց Յովհաննէս Մելիք Շահնազարեանց, Օհանջան Հախումեանց, Աւետիս Ղարաբէգեանց, և Աղէքսանդր Կուզնեցեանց իւրաքանչիւրը 25 ական ր. Հայրապետ Հախումեանց 30 րուբլի, Հայրապետ Ղուլբանդեանց և կոյս Անթառամ Վարդանեանց 20 ական րուբ. Շուշան Վէքիլեանց, Ներսէս Սարումեանց, Խորէն քահանայ Միրզաբէգեանց, Գրիգոր քահանայ Գրիգորեանց, Յովսէփ քահանայ Աշուղեանց, բժիշկ Միքայէլ Տէր Յոհաննեանց, Խաչատուր Սէրգէյեանց, Յովսէփ Թումայեանց, Իվան Միրզայ Աւագեանց և Աղաջան Յոնանեանց իւրաքանչիւրը 10 ական ր. Աբրահամ քահանայ Աբրահամեանց և Ստեփան Իսահակեանց 5 ական ր. ընդ ամէնն է 2930 րուբլի.

Յայտնելով իմ խորին գոհունակութիւնը վերոյիշեալ բարեսէր նուիրատուներին՝ մաղթում եմ նոցա՝ երկնային օրհնութեան և պարգևատուի առատ ողորմութիւնը. Իմ առ ի սրտէ շնորհակալիքը յայտնում եմ և օրհնում նոյնպէս Ասխապատու զօրաբանակում գտնվող Հայազգիներին, որոնք քրիստոնէական ջերմեռանդութեամբ մասնակցել են այս սուրբ գործին, հանգանակելով իրանց մէջ բարեկրօն Գրիգոր քահանայ Յովսէփեանցի ձեռամբ 150 ր. 50 կ. որը և հասած է մեզ լրիւ ստորագրութեան մատենի հետ.

Կառավարիչ թեմին Շամախւոյ. Թադէոս Եպիսկոպոս.

## Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

—

Թելաւի Երկսեռ Հոգևոր Հայ ուսումնարաններից օրիորդական Ս. Գայիանեան ուսումնարանում ուսանում են 110 աշակերտուհիներ, իսկ տղայոց Ս. Վարդանեան դպրոցում 80 աշակերտներ, որոնցից առաջին դպրոցը բաղկացած է բացի «մանկական պարտէզից» երեք դասարանից, այն է՝ փոքր նախակրթարանը առանձին դասատան մէջ է տեղաւորուած. Նախակրթարաններից Բ. և Գ. բաժանմունքը գտնվում է մի դասատան մէջ, և Ա. և Բ. դասատան աշակերտուհիները նոյնպէս ուսանում են մի դասատան մէջ՝ կազմելով երկու բաժանմունք. Տղայոց ուսումնարանը բաղկացած է 2 դասարանից նախակրթարանների 3 բաժանմունքները տեղաւորուած են մի դասատան մէջ և Ա. դասատուն առանձին՝ 2 բաժանմունքներով.—

Աւանդվում են ծխական դպրոցներին վերաբերեալ առարկայքը, իսկ օրիորդաց ուսումնարանում նաև ձեռագործ.—

Դասախօսում են հինգ ուսուցիչներ և 2 վարժուհիներ.—

Գալով տնտեսական մասին՝ պատիւ ունիմ ներկայացնել հետեւեալը. Ուսումնարանի տնտեսական ղեկը յանձնուելով մեր ձեռքը, ուսումնարանը գտնվում էր պարտքի մէջ, այժմ սրտի մեծ ուրախութեամբ կարողեմ յայտ առնել «Արարատ»ի միջոցով Հայ հասարակութեանը, որ մեր երկսեռ ուսումնարանները, ներկայ հոգաբարձութեան օրով, բացի այն, որ պարտքից ազատուել են, այլ և ունին պատրաստի դրամ հազար երեք հարիւր ութ ռուբլի (1308) եօթանասուն և վեց (76) կոպէկ, ինչպէս ակնյայտնի է անցեալ տարուայ այն տնտեսական հաշուից, որը նամակիս հետ ի միասին ուղարկելով խմբագրութեանը, յոյս ունիմ կը տպագրուի «Արարատ»—ի մէջ.—

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇԻՒ

Թէլաւի Հայոց երկսեռ ուսումնարանների սկսեալ 1883 ամի Յունվարի 1-ից մինչեւ 1884 ամի Յունվարի 1-ը.

Համառօտ ցուցակ արդեանց քաղեալ ի ժապաւիննեալ մատենէ երկսեռ ուսումնարանաց Հայոց Թէլաւի վասն 1883 ամի.

| № | | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| 1. | յԱնցեալ ամաց մնացորդ գումար ունէր ցմէկն Յունվարի 1883 ամի | 1213 | 33 |
| 2. | յԸնթացս 1883 ամի եմուտ ի կրպակէ մոմավաճառութեան | 839 | 50 |
| 3 | Եմուտ Թոշակագրամք յօրհորդաց | 797 | 60 |
| 4. | Եմուտ ուսման վարձ ի մանկանց | 106 | « |
| 5. | Եմուտ յուխտաւորեաց խաչահամբոյր և գին մատաղամորթեաց | 86 | 17 |
| 6. | Եմուտ վարձ ուսումնարանապատկան տանց և կրպակաց | 210 | « |
| 7. | յԵրկուց եկեղեցեաց Թէլաւի սահմանեալ դրամ | 180 | « |
| 8. | յԵրկուց այգեաց գտելոց ի գիւղն Փաշաւան | 27 | « |
| 9. | Եմուտ ի տեարց ննջեցելոց ի տեղի հոգեհացի | 90 | « |
| 10. | Եմուտ վարձ թատրոնի | 70 | « |
| 11. | Եմուտ նուէր ի դրամատանէ (բանկ) Թէլաւի | 80 | « |
| 12. | Եմուտ ի վիճակախաղաց | 194 | 59 |
| | (*) Ընդհ. գումար արդեանց | 3895 | 54 |

Համառօտ ցուցակ ծախուց քաղեալ ի ժապաւիննեալ մատենէ երկսեռ ուսումնարանաց Հայոց Թէլաւի վասն 1883 ամի.

| № | | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| 1. | Ռոճիկ չորից ուսուցչաց և երկուց վարժուհեաց | 1870 | 32 |
| 2. | Ռոճիկ երկուց ծառայից և մոմավաճառի | 234 | « |

(*) Ծան. խմբ. 3894 ր. 19 կ.

| | | | |
|---|---|---|---|
| 3· | Տուեալ վեց հատ Նորոգ շինել Նստարանաց և երկուց գրատախտակաց . . . . . | 48 | 20 |
| 4· | Ծախք ի վերայ Նորոգութեան յատակաց և լուսամուտից . . . . . . . . | 44 | 70 |
| 5· | Ծախք վառելափայտի . . . . . | 71 | 50 |
| 6· | Ծախք Թեւերի և այլոց իրեղինաց ձեռագործաց օրիորդաց . . . . . . . | 124 | 62 |
| 7· | Ծախք ի վերայ շինութեան Թատրոնական բեմի . | 56 | 88 |
| 8· | Գնեցաւ լուսանկար պատկերք Անի քաղաքի աւերակաց . . . . . . . . | 20 | » |
| 9· | Ծախք ի վերայ Նորոգութեան կրպակի մոմավաճառութեան . . . . . . . | 43 | 55 |
| 10· | Մանր ծախք ցանկ շինելոյ՝ և այլն երկուց ուսումնարանաց . . . . . . . | 73 | 1 |
| | Ընդհ· գումար ծախուց | 2586 | 78 |

Զայս ծախս ի բաց հանեալ ի մայր գումարաց և յեկամուտ դրամոց, մնաց առ մեկն Յունվարի 1884 ամի . 1308 76[1])

Նախագահ Հոգաբարձութեան Գէորգ Ա· քհնյ· Տ· Սարգսեանց

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Սկսեալ 1882 Թ· Հոկտեմբերի 22-ից մինչև 1883 Թուի Յունվարի 1-ը·

| № | ՄՈՒՏՔ | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| 1· | Թոշակադրամ· . . . . . . . | 1818 | » |
| 2· | Ս· Աստուածածնայ գանձանակից, շրջաբերութիւնից և Ս· Փրկչի տուփից . . . . . | 1782 | 88 |
| 3· | Կրպակավարձ· . . . . . . | 2851 | 75 |
| 4· | Մոմավաճառութեան կրպակից . . . | 1347 | 95 |
| 5· | Նախկին գանձապահ Պ· Ա· Իսահակյանից· . | 800 | » |
| 6· | Կտակաւանդեալ դրամ Աբրահամ Ունճեանի . | 100 | » |
| | Ընդհ· գումար մտից· | 8700 | 58 |

| | ԾԱԽՔ | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| 1· | Ուսումնական պիտոյք· . . . . . . | 28 | 90 |
| 2· | Արդիւնեան Օր· դպրոցին՝ ի հաշիւ կրպակավարձուց· | 534 | 50 |
| 3· | Ռոճիկ ուսուցչաց և ծառայից· . . . | 5216 | 14 |

(1) Ցան· Խմբ· 1307 ր· 41 կ·